

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Աեպտեմբերի 26-ին մեծ շուքով կատարուեց Նորին Սրբոթեան Վեհափառ կաթուղիկոսի անուանակոչութեան տարեդարձը։ Նախընթաց երեկոյեան միարանութիւնը հանդիսաւոր կերպով ուղեկցեց Վեհափառին Վեհարանից Մայր Տաճար։

Հանդիսաւոր ս. Պատարագից յետոյ Խջման ս. Աեղանի առաջ գոհարանական հայրապետական մաղթանք կատարուեց, որից յետոյ միարանութիւնը ու ներկայ ժողովուրդը համբուրեցին Հոդեոր Տիրոջ ս. աջու Ս. Պատարագից յետոյ Վեհափառ Հայրապետին ներկայացան և շնորհաւորեցին անուանակոչութեան տօնը՝ տեղական պաշտօնական հաստատութեանց ներկայացուցիչները, և ժողովրդի ներկայացուցիչները։

Վեհափառն զանազան տեղերից ստացել է բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ։

Վեհափառ կաթուղիկոսի բարեհաճ կարգադրութեամբ սեպտեմբերի 18-ին Թիֆլիս ճանապարհուեցին Սինօղի անդամներ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոս և Տ. Բարդին վարդապետ, իրեն Վեհափառի կողմից ուղարկուած յատուկ պատգամաւորութիւն, շնորհաւորելու կովկասի նոր Փոխարքայ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայիչի մուտքն ի կովկաս։ Պատգամաւորութիւնը Թիֆլիզի առաջնորդ Տ. Մեսրոպ Եպիսկոպոսի հետ սեպտեմբերի 23-ին ճաշից յետոյ ժամը 7-ին ներկայացաւ Տ. Փոխարքային՝ որը բարեհաճել էր նշանակել Վեհափառի պատգամաւորութեան համար յատուկ ունկնդրութիւն։ Պատգամաւորութեան կողմից Սինօղի նախանդամ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսն Նորին Բարձրութեան Տ. Փոխարքային

դառնալով շնորհաւորական խօսք ասաց և ապա մատուցեց
Վեհափառ կաթուղիկոսի կողմից Տ. Փոխարքային ուղ-
ղուած գրութիւնը փակ ծրարով։ Նորին Բարձրութիւն Տ. Փո-
խարքան շնորհակալութիւն յայտնելով ստացաւ Նորին
Վեհափառութեան նամակը։ Միւս օրը Տ. Փոխարքան
բարեհաճեց այցելութեան դալ առաջնորդարան Վեհա-
փառի պատղամաւորութեան և Թիֆլիսի Սրբազն Առաջ-
նորդին։

Սեպտ. 27-ին Թիֆլիսի վաճառականների աւագ. ոլ.
Ա. Միլեանը ուրիշների հետ այցելութեան զալով կաթու-
ղիկոսի պատղամաւորութեան՝ խնդրեցին վաճառականների
կողմից ճաշի միւս օրը ամսի 28-ին, որ կայացաւ Զմերային
ակումբում։ 28-ի երեկոյեան պատղամաւորութիւնը վերա-
դարձաւ Ա. Էջմիածին, և ներկայանալով Վեհափառ Հայ-
րապետին՝ մատուցեց Տ. Փոխարքայի կողմից ուղղուած
պատասխան գրութիւնը։

+ Տ. ԿեռնԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Սեպտեմբերի 14-ին ծանր հիւանդութիւնից յետոյ
կնքեց իւր մահկանացուն Մայր Աթոռի միարան վաղար-
շապատցի Տ. Կեռնդ Եպիսկոպոս Յովակիմեանը 63 տա-
րեկան հասակում։ Հանգուցեալը ստացել է իւր ուսումը
։ Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցում և աւարտել է
1870 թ. յունիսի 10-ին։ Նշանակուել է Ա. Էջմիածնի Տպա-
րանական ժողովի անդամ 1872 թ., ձեռնադրուել է սար-
կաւագ 1873 թ. մայիսի 12-ին։ Զեռնադրուել է կուսակրօն
արեղայ 1876 թ., իսկ 1878 թ. մայիսի 18-ին էլ ստացել է
վարդապետական մասնաւոր աստիճան։ 1881 թ. սեպտ.

1-ին նշանակուել է Գ. Շեմարանի երգեցողութեան ուսուցիչ: Նշանակուել է առաջ վերակացու նոյն Շեմարանում 1882 թ., կարգուել է Մ. Աթոռի հիւրընկալ 1887 թ., իսկ 1889 թ. էլ Վանական Կառավարութեան անդամ: 1905 թ. կարգուել է Վանական Կառավարութեան նախադահ: Խրիմեան կաթուղիկոսի օրօք ձեռնադրուել է եպիսկոպոս 1901 թ. մայիսի 13-ին, որից յետոյ վարում էր մինչև իւր վախճանը Մայր Տաճարի Լուսաբարապետութեան կարեւոր պաշտօնը: Հանգուցեալը դրսում պաշտօն չէ վարել, այլ սիրելով վանական կեանքը՝ պաշտօնավարել է միայն Մայր Աթոռում: Հանգուցեալը լաւ հմուտ էր հայկական ձայնադրութեան և շատ լաւ զիտէր եկեղեցու ժամապաշտութեան կարգերը ու ծիսակատարութիւնները: Մասնաւոր կեանքի մէջ ընկերական էր:

Թող թեթև լինի հողը հանգուցեալի վրայ:

† Տ. ԱԱՐԳԻԾ ԵԳԻԾԿՈՎՈՍ ՓԻԼՈՅԵԱՆ

Հոկտեմբերի 12 ին վախճանուեց Սևանայ մենաստանում նոյն վանքի վանահայր Սարգիս եպիսկոպոս Փիլոյեանցը: Հանգուցեալը ծնուել է նոր Բայազիտում 1852 թ. Յունուարի 25-ին: Կրթութիւնը ստացել է իւր հայրենիքի ծխական դպրոցում: Պարապել է ինքնակալիթութեամբ և վարել է ծխական դպրոցի ուսուցչութեան պաշտօն 1870 թ.: Քսան և մի տարեկան, 1873 թ., հասակում ստացել է դպրութեան չորս աստիճան Մկրտիչ եպիսկոպոս Բաբամետանի ձեռքով: Ծխական դպրոցներում պաշտօն է վարել 25 տարի, որ լրացել է 1895 թ., այդ թուին Սևանի միաբանութիւնը ընտրել և հրաւիրել է Փիլոյեանցին իրենց վանքի վանահայր, Փիլոյեանը գալիս է Սևան 1895 թ. 15-ն յունիսի: Զեանադրւում է սարկաւագ նոյն թուի 24-ն սեպտեմբերի: Եօթն օրից յետոյ, 45 տարեկան հասակում, 1 հոկտեմբր, 1895 թ. ձեռնադրւում է արեղայ Յովհաննէս

եպիսկոպոս Տէր Յարութիւնեանցի ձեռքով։ Ապա նոյն եպիսկոպոսից 17 դեկտ. 1895 թ. ստանում է վարդապետական մասնաւոր աստիճան։ Տ. Մկրտիչ Ա. կաթուղիկոսը 11-ն ապրիլի 1896 թ. կոնդակով հաստատում է նորան վանահայր Սևանայ մենաստանի։ 1899 թ. փետրուարի 4-ին պարզեատրւում է Խրիմեան կաթուղիկոսի կողմից վարդապետական լանջախաչով, իսկ թեմի այն ժամանակուայ փոխանորդ Տ. Ներսէս արքեպիսկոպոս Խուղավերեանից ծաղկեայ փիլոնով։ Երկու տարուց յետոյ 13 մայիսի 1901 թ. Տ. Տ. Մկրտիչ կաթուղիկոս Խրիմեանը արժանացնում է նորան եպիսկոպոսական ըարձր աստիճանի։ Հանգուցեալը համեստ և առաքինի վարքի տէր հոգեորական էր։ Նորա օրօք կառուցուեցան մի քանի կարենոր շինութիւններ, ինչպէս օրինակ Աւետիք Դուկասեանի ծախքով շինել տուած դպրոցի լու շինութիւնը, վանքի զանգակատունը, հիւրանոցի և այլ բնակարանների շինութիւնը։ Հանգուցեալը պարապում էր նաև գրական աշխատութեամբ, ունի գրած Սևանայ մենաստանի պատմութիւնը՝ բայց առ այժմ անտիւլ է։

Պատակաւոր վանահօր յիշատակը թող անմոռաց մեայ վանքի միաբանների և յարդողների սրտում։

† Տ. ՀԱՐՄԱԶՈՒՄԻ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՄԱԳՈՒՅՔՆԵՐԸ

Հոկտեմբերի 19-ին կնքեց իւր մահկանացուն ս. Էջմիածնի միաբան Վաղարշապատցի Տ. Համազասպ վարդապետը ծեր հասակում։ Մի տարի առաջ էր՝ անցեալ 1914 թ. օգոստոսի 26-ին, որ Մայր Աթոռի միաբանութիւնը տօնեց հանգուցեալի վարդապետութեան 50-ամեայ յորելեանը։ Հանգուցեալն իւր ուսումը ստացել է Մայր Աթոռի Ժառանգաւորաց գպրոցում։ Ըսդունուել է կուսակրօն միաբան Մ. Աթոռի 1855 թ. յունիսի 15-ին, ձեռնադրուել է սարկաւագ 1861 թ., իսկ արեղայ 1864 թ., Կարգուել է Մ.

Աթոռի վանական կառավարութեան անդամ 1866 թ., Գէորգ
Դ-րդ կաթուղիկոսի հրամանով ստացել է վարդապետական
մասնաւոր աստիճան 1868 թ. Հոկտ. 3-ին. Կարգուել է
Ախալցխայի Հոգևոր կառավարութեան անդամ 1875 թ. 11-ին
Յունիսի. Կարգուել է Եամախու կոնսիստորիայի նա-
խանդամ 1876 թ. հոկտ. 4-ին. Գօրի քաղաքի առաջնոր-
դական փոխանորդի պաշտօնն է ստանձնում 1881 թ.
մարտի 24-ին, ապա 1887 թ. յունիսի 23-ին կարգւում է
Քիշնևի կոնսիստորիայի նախանդամ և կալուածոց կառա-
վարիչ:

1890 թ. մարտի 10-ին Բեսսարաբիայի թեմի ժամ. կա-
ռավարիչ է նշանակվում. 1891 թ. նոյեմբերի 13-ին Սինոգի
հրամանով նշանակվում է Թիֆլիսի վիճակային կոնսիստո-
րիայի անդամ և միաժամանակ էլ էջմիածնապատկան կալ-
ուածների կառավարիչ, և վանահայր Ա. Սարգիս վանքի. 1898
թ. յունվարի 10-ին նշանակվում է Մայր Աթոռի Վանական
կառավարութեան անդամ, իսկ 1906 թ. յունուարի 2-ին
էլ կարգւում է Սինոգի գանձապահ և մնում է այդ պաշ-
տօնում մինչև 1908 թ.: 1908 թ. երրե գանձապահ
զնացել էր Երևան Պետական բանկից Սինոգին պատկանեալ
գումար ստանալու՝ վերադարձին աւաղակները կողոպտե-
լու նոլատակով յարձակում են նորա վրայ. որի ժամա-
նակ վնասում է նորա ձախ ձեռքը, շկամենալով յօժա-
րակամ Մ. Աթոռի դրամները յանձնել շարագործներին:
Վերջին տարիները ծերութեան պատճառով, մօտ 78 տա-
րեկան, աղասու պաշտօններից հանգիստ էր առնում անընդ-
հատ յաճախելով եկեղեցի: Հանդուցեալը բնաւորութեամբ
շափականց բարի և հիւրասէր անձն էր: Մայր Աթոռին
թողել է առաջին կարգի խաղարկութեան մի տոմս:

Հանդիստ վաստակաւոր բարի և անյիշաչար, եղբայ-
րասէր Տ. Համազասով վարդապետին, թող թեթև լինի հոգը
հանդուցեալի վրայ: